
ՈՍԿԱՆ ԵՐԿԱՆՑՈՒ ՁԵՌԱԳԻՐ ԵՎ ՏՊԱԳԻՐ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԵՐԿԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

ՆՈՐԱՅՐ ՊՈՂՈՍՅԱՆ

Ոսկան Երևանցին հայտնի է նախ և առաջ որպես մեր մեծ գրահրատարակիչներից մեկը, հայերեն ամբողջական առաջին և այն էլ՝ շքեղ Աստվածաշնչի հրատարակիչը: Ոսկան Երևանցու հրատարակչական գործունեությունը լուսաբանող գիտական բավականաչափ անդրադարձներ կարելի է գտնել: Սակայն Ոսկանի գործունեության մյուս ոլորտները, ինչպես օրինակ՝ թարգմանչական, ձեռագրեր ընդօրինակելու, նաև իբրև հոգևոր առաջնորդ, կարծես անհրաժեշտ չափով ուսումնասիրված չեն: Այնպես է ստացվել, որ 1664-ից մինչև իր մահը՝ 1674 թվականը, Ոսկանի ծավալած գրահրատարակչական գործունեությունը ստվերում է թողել նրա գործունեության մյուս ոլորտները: Մեր ունեցած տվյալների հիման վրա փորձենք ներկայացնել Ոսկանի թարգմանչական գործունեության հիմնական ուղղություններն ու արդյունքները: Այն որոշակիորեն կապված է քերականական գործունեության հետ, ուստի խոսք կլինի նաև Ոսկանի քերականական որոշ ձեռնարկումների մասին:

* * *

Հայերեն ձեռագիր մատյաններում ու հնատիպ գրքի էջերում պահպանվել են Ոսկան Երևանցու կատարած մի շարք թարգմանությունները: Դեռևս երիտասարդ տարիներից՝ առնվազն 1639 թվականից, երբ Ոսկանը 25 տարեկան էր, հիշատակներ կան նրա կատարած թարգմանությունների մասին: Որ ժամանակին Ոսկանն ունեցել է թարգմանչի համբավ, փաստում են պահպանված բազմաթիվ հիշատակարանների բնութագրումները: Այդպես, օրինակ՝ իր ժամանակակից Կարապետ Ադրիանացու մի հիշատակարանում, որը վերջինս թողել է 1657 թ. գրչագրած «Շաղկապք աստուածաբանութեանց Պրոկղի» ձեռագրում, կարդում ենք. «Գրեցաւ յերկիր Արարատայ, ի գաւառիս ցԱրագածոտան, նահանգիս Կարբւոյ, ի վայելուչ վանս, որ կոչի Յուշոյ Ս. Սարգիս ... դիտապետութեան ուխտիս տեառն **Ոսկանի ամենիմաստ թարգմանչի երևանցոյ և թարգմանչի**, որ ըստ դաղմատականին»¹:

Ոսկանի կենսագրությունից հայտնի է Պողոս Փիրոմալի դոմինիկյան վանականի հետ նրա ունեցած կապը: Պողոս Փիրոմալին Փիլիպպոս Ա կաթողիկոսի կողմից որոշ ժամանակով հրավիրվել է Էջմիածին և նշանակվել փիլիսոփայական գիտությունների դասատու: Նախիջևանի ապագա

¹ «ԺԷ դարի հիշատակարաններ», հ. 9, Եր., 1984, էջ 750: Այս և հետագայի ընդգծումները մերն են՝ Ն. Պ.:

կաթոլիկ այս առաջնորդի (կամ եպիսկոպոսի) հետ Ոսկանը ծանոթացել և ապա նտերմացել է 1634-ից ի վեր, և իր հետագա գործունեության շատ դրվագներ են կապված նրա հետ: Նրանց կապվածության մասին կարող է վկայել 1670 թ. Ոսկանի նամակից մեջբերվող թեկուզ հետևյալ հատվածը. «Առեալ յանձն զնախատինս ազգաց մերոց և յօտարաց, ոչինչ ենք կասեալք ի ճշմարտութեան ճանապարհէն յոլովիւք ամանակօք ի մանկութենէ իմմէ, ցորքան պատահեալ պատրի Պաւլի Պիրօմալի»²: Ոսկանը Փիրոմալուն բնութագրելու այլ առիթ էլ է ունեցել. 1669 թվականին իր հրատարակած Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» երկուն դոմինիկյան այս քարոզչին Ոսկանը համարում է «բանիբուն և կարի հմուտ, թպէտ **ի լեզուէ սակաւ ինչ տկար մերովս բարբառով**»³:

Լատիներենի գիտելիքները և թարգմանությունը Ոսկանը սովորել է նախ և առաջ Հայաստանում գտնվող Պողոս Փիրոմալուց: Այդ մասին ուղղակիորեն ասվում է Դավրիժեցու պատմության ԾԷ գլխում⁴, իսկ Փիրոմալին իր հերթին պետք է որ հայերենին տիրապետեր Հռոմում այդ ժամանակ տպագրվող հայերեն գրքերի՝ լատինաբան հայերենի չափով: Նման լատինաբան ընդգծված բնութագիր ունի Փիրոմալու «Յաղագս ճշմարտութեան հաւատոյն գրիստոնէականի» գրքի լեզուն (Հռոմ, 1674):

Ոսկանը Փիրոմալու հետ առնվազն երեք տարի ապրել է Լեհաստանում, ուր կաթոլիկ միջավայրը լավագույնս կարող էր նպաստել լատիներենի կատարյալ տիրապետմանը, և Հայաստան է վերադարձել 1641 թվականին, որի մասին պահպանվել է Փիրոմալու վկայությունը: Լատիներենի կատարյալ իմացությունը և, իհարկե, գիտական ու հոգևոր հետաքրքրությունների շրջանակը, անշուշտ, պայմանավորել են Ոսկան Երևանցու թարգմանական գործունեության ուղղվածությունը:

* * *

Ըստ կարևորության, նախ, առանձնանում են Աստվածաշնչի 1666 թ. հրատարակության առիթով Ոսկան Երևանցու կատարած մի շարք թարգմանությունները, որոնք նա զետեղել է իր հրատարակած Ս. Գրքում: Հրատարակվել է Հռոմի կաթոլիկ իրավասու մարմնին Ոսկանի հղած նամակը, ուր հեղինակը ասում է, որ լատիներենից հայերենի է թարգմանել Աստվածաշնչի այն մասերը, որոնք բացակայել են հայերեն ձեռագրերում⁵: Դրանցից մեկն է Սիրաքի գրքի նոր թարգմանությունը (Բ մաս, էջ 146-188): Երկրորդականոն համարված հինկտակարանյան այս գիրքը հայերեն Աստվածաշնչի գրքերի հնագույն ցանկերում՝ կանոնում, ընդգրկված չէ: Սակայն,

² Հ. Պ. Անանեան, Ոսկան Վարդապետի նամականին, «Բազմավեպ», 1967, էջ 298:

³ Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ամստերդամ, 1669, էջ 633-634: Ա. Դավրիժեցու՝ ոսկանյան այս հրատարակության ԾԷ գլուխը կրում է «Պատմութիւն կենաց Ոսկանայ վարդապետի Երևանեցոյ տպագրողի գրոյս և այլոց» վերնագիրը:

⁴ Ապացուցված է, որ Դավրիժեցու «Գիրք պատմութեանցի» 1669 թ. ոսկանյան հրատարակության ԾԷ և ԾԸ գլուխների հեղինակը ինքը՝ Ոսկան Երևանցին է (տե՛ս՝ Հ. Սիրոգոյան, Առաքել Դավրիժեցու պատմության առաջին հրատարակությունը, ԲԵՀ, 1974, ք. 2, էջ 190-197):

⁵ Տե՛ս հ. Սահակ Գեմճեմեան, Հայ տպագրութիւնը և Հռոմ (ԺԷ դար), Վենետիկ, 1989, էջ 94:

օրինակ՝ Գրիգոր Տաթևացու կազմած ցանկում առկա է⁶: Ըստ Ս. Քոլանջյանի՝ ոսկանյան Աստվածաշունչը տպագրվել է՝ հիմքում ունենալով 1295 թ. Կիլիկիայում գրչագրված և ներկայումս Մաշտոցյան Մատենադարանում պահվող թ. 180 ձեռագիր Աստվածաշունչը: Վերջինի լուսանցքներում կան հետագայի նշումներ, բնագրային ճշգրտումներ, տնահամարներ և այլն, որոնք, ենթադրվում է, արել է ինքը՝ Ոսկան Երևանցին⁷: Պետք է ենթադրել, որ իր տպագրած Աստվածաշունչի հիմնական բնագիր հանդիսացող ձեռագրում Սիրաքի գիրքն ընդգրկված չի եղել, և Ոսկանն ինքն է ձեռնամուխ եղել դրա վերստին թարգմանությանը:

Ոսկանի այս թարգմանության մասին կարելի է կարծիք կազմել՝ համեմատելով նրա թարգմանածը Սիրաքի հնագույն թարգմանության տեքստի հետ: Ստորև ներկայացնում ենք մի փոքր հատված Սիրաքի գրքի առաջին գլխի 1-5 համարներից: Առաջին սյունակում բերված է Ս. Գրքի Կ. Պոլսի 1895 թ., իսկ երկրորդում՝ ոսկանյան հրատարակության բնագիրը:

Ս. Գրքի Կ. Պոլսի 1895 թ. հրատ.

Ամենայն իմաստութիւն ի Տեառնէ է. կայ եւ մնայ ընդ մնա յաւիտեան:

Ձաւազ ծովու եւ գշիթս անծրեւաց եւ զաւուրս ժամանակաց ո՞ թուեսցէ երբեք:

Ձբարծրութիւնս երկնից եւ զլայնութիւնս երկրի, եւ զանդունդս իմաստութեան՝ զայն ո՞ քննեսցէ:

Յառաջ քան զամենայն հաստատեցաւ իմաստութիւն. զգաւնութիւն եւ հանճար յաւիտենից էին:

Արմատք իմաստութեան ի մնա յայտնեցան:

Ոսկան Երևանցու 1666 թ. հրատ.

Ամենայն իմաստութիւն ի Տէր Աստուծոյ է և ընդ մնա եղև միշտ և է յառաջ քան զյաւիտեանս:

Ձաւազ ծովու և գշիթս անծրեւաց և զաւուրս ժամանակաց ո՞ թուեաց:

Ձբարծրութիւնս երկնից և զլայնութիւն երկրի և զխորութիւն անդնդոց ո՞ չափեաց: Ձիմաստութիւն Աստուծոյ նախընթաց ամացն ո՞վ հետազոտեաց:

Յառաջ քան զամենայն հաստատեցաւ իմաստութիւն և զգօնութիւն հանճարոյ յաւիտենից:

Աղբիւր իմաստութեան բանն Աստուծոյ ի բարձունս:

Հենց միայն այս հատվածների վրա հենվելով՝ կարելի է եզրակացնել, որ Ոսկանի թարգմանությունն իրենից ներկայացնում է նոր աշխատանք, շատ դեպքերում լատիներենից թարգմանելիս ստացվել են նոր արտահայտություններ, ինչպես՝ հին թարգմ.՝ «զանդունդս իմաստութեան» - Ոսկանի թարգմ.՝ «զխորութիւն անդնդոց», «արմատք իմաստութեան» - «աղբիւր իմաստութեան» և այլն:

Սիրաքի գրքի այս նոր թարգմանության «Առաջաբանութեան» մեջ նկատվում են լատինաբանության որոշ հետքեր, ինչպես, օրինակ, հետևյալ հատվածում է՝ «յորդորեն զձեզ գալ հանդերձ բարեկամութեամբ և ներանկատմամբ կրթման զընթերցումն առնել և գիւտ ունիլ ի նոսա,

⁶ Տե՛ս **Ներսես ավ. քահ. Ներսեսյան**, Աստվածաշունչը և հայ մշակույթը, Եր., 2001, էջ 24-29:

⁷ Տե՛ս **Ս. Քոլանջյան**, Հեթում Բ-ի ձեռագիր Աստուածաշունչը և ոսկանյան հրատարակությունը, «Էջմիածին», 1966, էջ 98-130:

նորս տեսանիմք հետևողք տպոյն իմաստութեան՝ նուազեցուցանելով ներ շարադրութեան բանից» (Բ մաս, էջ 146), սակայն հետագա շարադրանքում լատինաբան շունչն ընդհանուր առմամբ հաղթահարված է: Նվազագույնի է հասցված Ոսկանի մյուս երկերին խիստ հատուկ **Մ, Մեր** մասնիկներով ներգոյականի կազմությունը, որի փոխարեն Սիրաքի իր թարգմանության մեջ Երևանցին արդեն գործածում է գրաբարյան ներգոյականի հարազատ ձևեր՝ **յերկիւղի, յաւուրս, ի ժամանակի** և այլն: Առհասարակ լատինաբան հայերենը խորթ չէ Ոսկան Երևանցու ոչ միայն թարգմանական, այլև ինքնուրույն գրվածքներին: Օրինակ՝ լատինաբանության կնիքն է կրում 1656 թ. Ոսկանի գրչագրած «ժողովածուում» նրա թողած հիշատակարանը: «Սիոնում» Նորայր արք. Պողարյանը բերում է շատ կողմերով շահեկան հիշատակարանն ամբողջությամբ, որի սկզբի մասն իսկ կարող է պատկերացում տալ այդ հիշատակարանի լեզվի և մանավանդ նրա լատինաբան ուղղվածության մասին. «Պարագայութեամբ ամաց՝ ըստ շրջաբերութեան մեծագունւոյ լուսաւորին եւ իշխողին տունջեան, որոյ Եթերաչափութիւն ի թիւ համարոյ արկեալ առ յաճումն կալանդաց ամ յամէ յաւելեալ մինչեւ աստ առ մեզ բարեհաճ կարգաւորութեամբ, ներ որոց ամենայն ներգործութիւնք եւ կիրք իրակութեան եւ գործառնութիւնք արուեստաւորութեան մերոյ շարալրացեալ յաւարտս ժամանեն, սակս ոչ մարթելոյ համանգամայն ծայրաւորելոյ...»⁸:

Մատնանշենք Ոսկանի սուրբգրային թարգմանական մի առանձնահատկություն ևս. հարյուրամյակներով գործածված աստվածաշնչյան որոշ բանաձևեր, որոնց Ոսկանը քաջածանոթ պետք է լիներ՝ դրանք եկեղեցական ծեսերում շարունակաբար գործածված լինելու շնորհիվ: Ոսկանը նորովի է թարգմանել, օրինակ՝ «Սկիզբն իմաստութեան երկել Տեառն» հատվածի համար թեև իր տպագրած Ս. Գրքի լուսանցքում Ոսկանը հղում է արել Առակաց գրքին, որտեղ հանդիպում է այդ հատվածը, սակայն նույն միտքն իր մոտ այլ ձևակերպում է ստացել՝ «Սկիզբն իմաստութեան՝ զգոնութիւն Տեառն»: Մեկ այլ օրինակ. Առակաց գրքի «Լաւ իցէ բնակել յանապատի, քան ընդ կնոջ անզգամի լեզուանոյ եւ բարկացողի» հատվածը, որին հղում ունի տպագիրը, Ոսկանի մոտ հնչում է այլ կերպ՝ «Բնակիլ ընդ առիւծոյ և վիշապի հաճոյացի, քան բնակիլ ընդ կնոջ չարաբարոյի»:

Թարգմանական նույն մոտեցումները կարելի է հանդիպել Ս. Գրքում զետեղված Ոսկանի մյուս թարգմանությունների բնագրերում, որոնք հետևյալն են. Եզրասի Դ գիրքը, որ Հին Կտակարանի անվավերներից է և 1666 թ. Աստվածաշնչում դրված է որպես հավելված (երկրորդ մաս, էջ 719-744), որպես հավելված են զետեղված նաև Ս. Գրքի Հերոնիմոսի առաջաբանությունը և նախադրությունները, որոնք թարգմանել է Ոսկանն ինքը (էջ 745-759), նաև՝ Աստվածաշնչի ցանկերը (էջ 760-829)⁹: Դրանցից շատերը Աստվածաշնչի հայերեն բնագրում ներմուծվում էին առաջին անգամ:

⁸ Տե՛ս **Ն. Եպս. Ծովական**, Ս. Սարգիս վանք Ուշոյ, «Սիոն», 1966, էջ 548:

⁹ Թեմայի մասին տե՛ս նաև՝ **Նորայր Եպս. Պողարեան**, Հայ գրողներ, Երուսաղեմ, 1971, էջ 537-540:

Հայերեն մի շարք ձեռագրերում պահպանվել են հոգևոր և փիլիսոփայական բովանդակության երկերի՝ Ոսկան Երևանցու կատարած թարգմանությունների բնագրերը: Այդպիսին է, օրինակ, Մաշտոցյան Մատենադարանի 1684 թվահամար ձեռագիրը¹⁰: Այն պարունակում է իմաստասիրական բնույթի մի քանի երկեր, որոնց թվում «Բանք Պետրոս Արագոնացւոյ» (էջ 3ա-238ա), «Համառօտ հաւաքումն և յոյժ օգտակար ի դիաղէկտիկայէն, որ է տրամաբանութիւն» (էջ 252ա-383բ)¹¹: Նույն ձեռագրի 239ա-251բ էջերին զետեղված է «Ջիլբերթոսի Պօռետացւոյ ճեմականի Վեցից սկզբանց գիրք» երկը¹²: Ձեռագրի երկու տարբեր հիշատակարաններ հուշում են, որ նույն ձեռագիրը գրչագրել և Ջիլբերթոսի երկը նաև «վերստին թարգմանել» է Ոսկանը: Ներկայացնենք այդ հիշատակարանները.

էջ 251ա. «Վեցից սկզբանց գրոց վերջ: **Վերստին թարգմանեալ ձեռամբ Ոսկանի բանասիրի.** թվ. ՌԴԲ (1643)»:

էջ 283բ. «Աւարտեցաւ գիրքս փիղիսօֆայական **ձեռամբ Ոսկանի բանասիրի** և փծնոյ գրչի, թուին ՌԴԲ (1643) յամսեանն հռուոյ, որոյ էին աւուրք է, ի խնդրոյ բանի սպասաւորի և քաջագունի հռետորի՝ Յովհաննէսի Մուղնեցւոյ»:

Նախ պետք է ասել, որ 1643 թվականին, երբ գրվել են այս հիշատակարանները, Ոսկանն արդեն Հայաստան էր վերադարձել, և, ինչպես երևում է այս և մի քանի այլ ձեռագրերի տվյալներից, թարգմանչական բուռն գործունեություն էր ծավալել:

«Վեցից սկզբանց գիրքը», ինչպես նախասահմանվում է սկզբում, վերաբերում է յոթ հասկացությունների՝ «կերպի, ներգործութեան, երբի, ուրի, դրութեան, ունելութեան և յաղագս այնորիկ, զի՞նչ է ընդունիլ զառաւելն և զնուազն» (էջ 239ա): Հետագա էջերում մեկ առ մեկ քննվում են *կերպը*, *ուրը* և այլն, ինչպես օրինակ՝ «Կերպ է ներընդունական բաղադրութեան պարզի և անզանազանելոյ էութեամբ բաղկացեալ», «Դրութիւն է ոմն մասանց կալումն և սերականութեան կարգադրութիւն», «Ունակութիւն է մարմնոց և այնոցիկ, որ շուրջ զմարմնով են յարադրութիւնք»: Աշխատության մեջ նշված հասկացությունները մեկնաբանելիս տրվում են նրանց տարատեսակները, դրսևորումները: Օրինակ՝ «կերպիցն իսկ ոմն է նենթակայում, և զենթակայէ ասի, հիբար՝ մակացութիւն նենթակայում է ումեմն, այսինքն՝ նանծում, և զենթակայէ ասի, այսինքն՝ զքերականութենէ» (էջ 240բ):

Ձեռագրի լուսանցքներում պահպանվել են գրիչի, այս դեպքում՝ թարգմանիչ «Ոսկան բանասերի» խմբագրական միջամտությունները: Ջգացվում է, որ ձեռագրի գրիչը՝ Ոսկան Երևանցին, աշխատությունն արտագրելիս ստեղծագործական մոտեցում է ցուցաբերել: Իսկ որ այդ միջամտությունները

¹⁰ Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի համար այսուհետև գործածում ենք ՄՄ հապավումը:

¹¹ Ձեռագրի մանրամասն նկարագրությունը տես «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան մատենադարանի», հտ. Ե, Եր., 2009, էջ 889-890:

¹² Ջիլբերթոսի երկի թարգմանության տարբեր ձեռագրերից լատինաբան հայերենի փաստեր է ներկայացրել Վ. Համբարձումյանն իր «Լատինաբան հայերենի պատմություն» (Եր., 2010) աշխատության մեջ:

րը թարգմանչինը և նույն ինքը՝ ձեռագիրը գրողինն են, շատ պարզ երևում է ձեռագրի նույնությունից: Այս դեպքում գուցե Ոսկանի նշած «վերստին **թարգմանեալ**» արտահայտությունը պետք է ընկալել «խմբագրել» իմաստով, այսինքն՝ նախապես իր իսկ կատարած թարգմանությունը թարգմանիչն ինքն էլ արտագրել է խմբագրական որոշ միջամտություններով: Ի՞նչ կարգի խմբագրության մասին է խոսքը. ձեռագրի հիմնական շարադրանքում «բացերեւութին և գաղտնութին» արտահայտությունը, որ լատինաբանության կնիքն է կրում, լուսանցքում առավել պարզ ձևով է բացատրված՝ «պայծառութին և մզութին», «կայանայ» բացատրված է «բաղկանայ», և նման կերպով բազմաթիվ հասկացություններ պարզեցվել են լուսանցքում ընթերցողին առավել դյուրամարս դարձնելու համար:

Ձիլբերթոսի երկի ոսկանյան թարգմանության մեջ աչքի է զարնում լատինաբանության արդյունք նորակազմ հասկացությունների առատությունը: Թարգմանիչը ստիպված է եղել լատիներեն բյուրավոր բառեր պատճենել, նորերը կազմել, որոնց առատությունը երկի առաջին առանձնահատկությունը պետք է համարել, ինչպես՝ շարկանալ (=բաղկանալ), յարընկղմնիլ, ներպարառութին, սերականութին (=սերելու՝ գոյանալու ունակությունը), շաղաշարեալք (=շարված՝ հաստատված), արտալուզիլ (եթե այս գործածությունը վրիպակ չէ, ուրեմն կոնտեքստում ունի «բացատրել, արտահայտել» իմաստը), բացակատարել (=վերածվել), շարահաւաքութին, անշարամանեալ (=չշարադրված) և այլն:

Ձիլբերթոսի երկի ոսկանյան թարգմանությունը պահպանվել է նաև ՄՄ 926, 1738, 1742 և այլ թվահամար ձեռագրերում: Մասնավորապես 18-րդ դարում ստեղծված ՄՄ 926 ձեռագիրը պահպանել է նաև թարգմանչի հիշատակարանը՝ «Վերստին թարգմանեալ ձեռամբ Ոսկանի բանասիրի, թվին ՌԴԲ»:

Մեր հեղինակի իմաստասիրական մեկ այլ աշխատություն նաև տպագրվել է առանձին, այդ թվում՝ ռուսերենի թարգմանված: Խոսքը Ոսկանի «Յաղագս միութեան եւ միաւորութեան. նոյնք են եթէ զանազանք» փիլիսոփայական աշխատության մասին է, որը վերցված է Առաքել Դավրիժեցու պատմության 1669 թ. հրատարակության ԾԸ գլխից: Ուշագրավ է հրատարակչի եզրակացությունը՝ «Ոսկան Երևանցու սույն աշխատությունը ցույց է տալիս, որ նրա հեղինակը փիլիսոփայական բարձր պատրաստականություն ունի»¹³:

Ոսկանի՝ իմաստասիրական բնույթի այլ թարգմանություններ նույնպես կարելի է գտնել ձեռագրերում: Օրինակ՝ ՄՄ 873 թվահամար ձեռագրի (1792թ., էջմիածին) 267բ-270բ էջերին՝ «Յաղագս այնորիկ, որ է գյաւէտն եւ զնուազն ընդունել», թարգմանիչ՝ Ոսկան և այլն:

* * *

Ոսկանի կատարած թարգմանությունների շարքում իր ժամանակին ունեցած լայն գործածությամբ աչքի է ընկնում քերականական աշխատու-

¹³ **Յ. Միրզոյան**, Ոսկան Երևանցու «Յաղագս միութեան և միաւորութեան. նոյնք են եթէ զանազանք» փիլիսոփայական աշխատությունը (ռուս.), ՊԲՅ, 1971, ք. 3, էջ 163-173:

թյունը: Հայագիտության մեջ տարբեր կերպ են մեկնաբանվել Ոսկան Երևանցու քերականագիտական գործունեությունն ու հայացքները¹⁴, որոնց շարքում իր մանրակրկիտությամբ առանձնանում է հատկապես Գ. Ջահուկյանի «Գրաբարի քերականության պատմություն» աշխատությունը, ուր լեզվաբանը Ոսկանին համարում է «լատինատիպ ռացիոնալիստական» քերականության սկզբնավորողներից մեկը և մանրամասն ներկայացնում է նրա քերականագիտական ըմբռումները, համակարգը և այլն: Ոսկան Երևանցու քերականական մոտեցումներին է անդրադարձել նաև հայր Ներսէս Տէր-Ներսէսեանը¹⁵, որը, սակայն, հարցը դիտարկում է միայն լատինաբանության լույսի ներքո, դա է հուշում նաև հոդվածի ենթախորագիրը՝ «Լատինաբան հայերենը և Ոսկան»: Ըստ Տէր-Ներսէսյանի՝ այս գիրքը լատինաբան հայերենի քերականության առաջին մտուշն է:

Պետք է ասել, որ նշված քննությունների համար հիմք է ծառայել Ոսկան Երևանցու **տպագիր** քերականությունը, սակայն դրանից բացի առկա է նաև հեղինակի **ծեռագիր** քերականությունը, որն ավելի ընդարձակ է և շատ տեղերում տարբերվում է տպագիր տարբերակից:

Դավրիժեցու պատմության 1669 թ. արդեն հիշատակված հրատարակության հիշատակարանում պատմվում է, որ Ոսկանը, լատիներենին տիրապետելով, մի քերականության գիրք է թարգմանում հայերենի՝ «յորմէ և ժողովեաց զկարճառօտ քերականութիւն»¹⁶:

Ոսկանի ստեղծած ծեռագիր և ապա տպագիր քերականությունը մեկնաբանելու հրաշալի բանալի է տալիս ժամանակի առաջադեմ և գիտական բարձր աստիճանի հասած Սիմեոն Ջուղայեցին: Ոսկանն ու Սիմեոնը եղել են ուսումնակիցներ, միասին են սովորել Մելքիսեթ Վժանեցու մոտ, և հոգևոր ու գիտական շատ թելերով այս երկու հայորդիները կապված են եղել: Այդ մասին է խոսում նաև Առաքել Դավրիժեցու պատմությունը՝ «Սոցա երկուցս՝ Սիմօնին և Ոսկանին, հարկ եղև միոյն մնալ ընդ վարդապետին Խաչատրոյ (Ջուղայեցոյ), զի սոքա երկոքեանս էին սեպիական **աշակերտք նորին ի մանկութենէ**»¹⁷:

Պահպանվել և հրատարակվել է Սիմեոնի՝ 1639 թվականին Ոսկանին հասցեագրած նամակը, երբ վերջինս Հայաստանից տարագիր գտնվում էր Եվրոպայում: Սրտակից խոսքերից բացի՝ Սիմեոնը որոշ գնահատական է տալիս նաև մի քերականության, որը, ինչպես հասկացվում է նամակի բովանդակությունից, նախապես իրեն է ուղարկած եղել Ոսկանը: Նամակի այդ հատվածը բերում ենք ամբողջությամբ. «Այն գիրն, որ առաքեալ էիր՝ թէ զքերականութիւն լաւ գիտի, գոյր յոյժ անարուեստ, ոչ ըստ այնմ արուեստին, որ նախ ի միջի մերում էր, այլ այլ իմն որ ոչ լուեալ էս, եւ թէ լուիցես, բայց ոչ գիտես, քանզի ի գրեցելունն քո ոչ գոյր ընտրութիւն հո-

¹⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, Եր., 1974, «Ոսկան Երևանցի» գլուխը՝ էջ 63-87, Զ. Մխիթարյան, Ոսկան Երևանցին իբրև քերականագետ, «Էջմիածին», 1966, էջ 210-217, Զ. Միրզոյան, 17-րդ դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Եր., 1983:

¹⁵ Տե՛ս հ. Ներսէս Տէր-Ներսէսեան, Ոսկան վարդապետի քերականական ըմբռնումները, «Բազմավեպ», 1966, թ. 11-12, էջ 310-321:

¹⁶ Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 633:

¹⁷ Նույն տեղում, էջ 632: Թեմային է նվիրված հետևյալ հոդվածը՝ Զ. Միրզոյան, Սիմեոն Ջուղայեցի և Ոսկան Երևանցի, ԲեՅ, 1978, թ. 3, էջ 186-192:

լովմանց բայի: Եւ արդ զայս հարցից՝ սիրեսցես, սիրեսչիր, սիրիցես և զանազանքն. քանզի տրամատրութեամբ, տեսակաւ, ձեւով, թուով, դիմօք և ամանակաւ անզանազանք են և հոլովիւք միայն զանազանեալք: Եւ այս վասն այնր գրեցի, զի խիստ զովեալ ես զքերականութիւն, որ յայդմ վայրի է»¹⁸:

Այս նամակը, ի դեպ, լավագույնս ցույց է տալիս Ոսկանի հանդեպ էջմիածնի միաբանության տրամադրությունները: Սիմեոնը գրում է՝ «Ո՛ւախ, ո՛ւախ, զո՞րս գրեցից, զի դժուարագոյն է զամենայն ի թղթի պարունակել: Արդ աղաչեն, եթէ զմեզ մոռացար, վասն մօր քո Ե՛կ, Ե՛կ, Ե՛կ. ոչ է բաւ»¹⁹:

Ոսկանին ուղղված Սիմեոնի նամակը հայտնի է հայագիտությանը: Դրա մասին խոսելիս Զ. Միրզոյանը հնարավոր է համարում, որ Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի դիվանում կարող է պահպանված լինել Ոսկանի՝ նամակը՝ ուղղված Սիմեոնին, որի պատասխանն է, ըստ էության Սիմեոնի հիշատակված նամակը. «Ջուղայեցու սույն նամակից զգացվում է, – գրում է Զ. Միրզոյանը, – որ մինչ այդ Ոսկանը նրան է ուղարկել քերականության ինչ-որ գիրք՝ դրվատելով հեղինակի լեզվական իմացությունը: Մինչդեռ Ջուղայեցին իր նամակում հայտնում է, որ այն լուրջ արժեք չունի և նույնիսկ ցույց է տալիս, իր կարծիքով, նրանում եղած սխալները»²⁰:

Սիմեոն Ջուղայեցին ծավալով ոչ մեծ իր քերականությունը գրել է 1637 թվականին, բայց այն տպագրության բախտին արժանացել է շատ ավելի ուշ՝ 1725 թ.²¹: Դրա փոխարեն տասնյակ ձեռագիր ընդօրինակություններ է ունեցել, որոնք պահպանվել են մինչ օրս, նաև 18-րդ դարում թարգմանվել վրացերեն²²:

1725 թվականին Կ. Պոլսում տպագրված քերականությունը Սիմեոնի ստեղծած այն նույն աշխատությունն է, ինչը որ ձեռագիր վիճակում տասնամյակներ շարունակ գործածվում էր հայ կրթական հաստատություններում, որը, պետք է ասել, իրոք պարզ, մատչելի և այդ առումով գրավիչ ձևով մատուցում է քերականության «տարերթը», մանրամասնորեն բանաձևում և օրինակներով բացատրում քերականական մտքերը: Այդ մասին է շեշտում նաև գրքի հրատարակչի՝ Մարտիրոս Դպիրի առաջաբանը. «Յետ սակաւ ամաց արար Սիմեոն զքերականութիւնս այս **պարզ ոճով** ... զի թարց ուսուցչի հասկանայցեն»²³: Իր քերականական ընդհանուր համակարգով այն ոչ թե հենված է լատինաբան քերականությունների վրա, այլ բխում է հայերենի օրինաչափություններից և 17-րդ դարում ընդունված քերականագիտական ըմբռնումներից: Անշուշտ այդ իմաստով է, որ Սիմեոնի քերականությունը համարվում է առաջին ինքնուրույն քերականություններից մեկը: Այդպիսի կարծիք է հայտնել Զ. Միրզոյանը. «Չնայած իր ծավալի փոքրությանը, արդի իմաստով, Ջուղայեցու «Քերականութիւնը» հա-

¹⁸ «Բազմավեպ», 1967, էջ 132:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Զ. Միրզոյան, 17-րդ դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Եր., 1983, էջ 146:

²¹ Սիմեոն Ջուղայեցու՝ Կ. Պոլսում 1725-ին տպագրված քերականության լրիվ վերնագիրն է՝ «Սիմեոնի վարդապետի Ջուղայեցոյ արարեալ Քերականութիւն ըստ լեզվի մերում հայկազանց»:

²² Տե՛ս Զ. Միրզոյան, Սիմեոն Ջուղայեցի, Եր., 1971, էջ 41-42:

²³ Սիմեոն Ջուղայեցի, Քերականութիւն, Կ. Պոլիս, 1725, էջ 9:

յոց լեզվի առաջին ամբողջական քերականությունն է, որտեղ հեղինակը ինքնուրույն է քննարկել հայերենի հնչյունաբանությունը, բառագիտությունը, ձևաբանությունն ու շարահյուսությունը»²⁴:

Հայ լատինատիպ և ինքնուրույն քերականությունների սահմանը գատելու տեսակետից գիտական որոշակի հետաքրքրություն կարող է ներկայացնել այն հարցի պարզաբանումը, թե ինչ նմանություններ և հատկապես տարբերություններ են ի հայտ բերում Սիմեոնը և Ոսկանը քերականական այս կամ այն հասկացությունը սահմանելիս: Հետագային թողնելով այդ հարցի առանձին քննությունը՝ այստեղ միայն նշենք, որ մեր երկու ուսումնականիցների՝ Ոսկանի և Սիմեոնի տպագիր քերականություններից քաղած որոշ սահմանումների զուգադրումը ի հայտ է բերում և՛ նմանություններ, և՛ էական տարբերություններ:

Ոսկան. «Քերականութիւն է հմտութիւն գործիական մարդկայնոյ քաղաքականութեան, բանականաբար ասելոյ, որ և գրելոյ՝ զոր ինչ մտօք առնումք պարզապէս իւրաքանչիւրոյ իրի ծանօթութիւնս»:

Սիմեոն. «Քերականութիւն է գիտութիւն տառից և ասութեանց և կիր առութեանց սոցին, ըստ շարագրութեան քերթողացն»:

Ոսկան. «Գիր է յօդաւոր ծայնի մասն նուաստ, կամ ըստ լատինացւոց՝ գիր է տարր առաջին, վասն որոյ նուաստագոյն մասն բանի»:

Սիմեոն. «Գիր է, որով ձևանայ ծայն յօդաւոր և նոյնս տառ կոչի, վասն զի ունի տարրումն իմն և դասութիւն»:

Ոսկան. «Բառ է հնչումն բերանով շնչաւորի արտաբերեալ՝ բնականօք գործիւք կերպարանեալ առ ի նշանակել սահմանաբար զայլ իմն զպարզ՝ մտօք յղեցեալ»:

Սիմեոն. «Բառ է ծայն յօդաւոր նշանակող առանց շարամանութեան կամ առնշանական»:

Ոսկան. «Բան է բառից շարամանութիւն՝ կարգաւորեալ առ ի յայտնել զոր ինչ մտօք շարամանաբար շար առնումք»:

Սիմեոն. «Բառ է շարամանութիւն բառից, յայտնող տրամախոհութեան»:

Ոսկան. «Բայ է մասն բանի հոլովական, նշանակող ի բաղդատութենէ իրաց զգործ կամելոյ կամ կալոյ կամ ներգործելոյ կամ արտագործելոյ կամ կրելոյ կամ տալոյ»:

Սիմեոն. «Բայ է բառ հոլովական, որ զգու ինչ կամ առնել կամ կրել նշանակէ հանդերձ ամանակաւ և դիմօք»:

Ոսկանի քերականագիտական հայացքներին, ինչպես արդեն ասացինք, անդրադարձել են տարբեր հեղինակներ: Մեզ այստեղ հետաքրքրում է մի կողմից՝ նրա քերականության թարգմանական լինելու հանգամանքը, մյուս կողմից՝ 1669 թվականի տպագիր քերականության հետ ունեցած աղերսները:

Պահպանվել են Ոսկանի անունով հայտնի քերականության մի քանի ձեռագիր օրինակներ, որոնցից մեկն է ՄՄ 3391 թվահամար ձեռագիրը²⁵:

²⁴ Հ. Միրզոյան, Սիմեոն Ջուղայեցի, էջ 39:

²⁵ Ձեռագրի համառոտ նկարագրությունը տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հ. Ա, եր., 1965, էջ 1002:

Նրանում առկա աշխատության վերնագիրն է՝ «Քերականութանց գիրք առաջին: Արարեալ մեծի հռետորին Թումայի Իտալացոյ, **արտադրեալ ի Հայս Ոսկանի Երևանցոյ**»: Ոսկանի տպագիր քերականության վերնագրում կան տիտղոսաթերթին, կան մի այլ տեղ Թովմա Իտալացու մասին հիշատակ չկա, տպագրի վերնագիրն է՝ «Քերականութան գիրք. Համառօտիւք ծայրաքաղ արարեալ յաղագս մանկանց և նորավարժից կրթութան ի տառս մատենից և ի գիտութիւնս մասանց բանի, ըստ քերթութան արհեստի»: Տպագրի վերջում՝ էջ 111-112, գետեղված է Ոսկանի հիշատակարանը, որում նույնպէս հիշատակություն չկա Թովմա Իտալացու մասին, դրա փոխարեն խոսվում է մի ընդարձակ աշխատությունից «ծաղկաքաղ» լինելու մասին. «Ձսակաւուք աշխատօղս ի սմա և **գծայրաքաղ բանահիւսս** սակս վարժութեան մանկանց նորոյ Սիօնի և պայծառութեան ներակրթելոց՝ գնուաստ անծս Տէր Ոսկան բանի սպասաւոր յիշել աղերսեմ, զի աշխատեալ թարգմանեցի ի բարբառոյ դաղմատացւոցն ի հայս և անտի ևս ծաղկաքաղ արարեալ կարճառօտիւք ի զբօսանս ուսումնասիրաց զյաւէտ պիտանացունս և զկարևորսն հաւաքեցի»²⁶:

ՄՄ 3391 ձեռագիրը և տպագիրը գրեթէ ամբողջությամբ համընկնում են քերականությունը սահմանելիս. «Քերականութիւն է արուեստ գործիական մարդկայնոյ քաղաքականութեան բանականաբար ասելոյ, որ և գրելոյ, զոր ինչ մտօք առնումք պարզապէս իւրաքանչիւր ծանօթութիւն»:

Այս սահմանումից անմիջապէս հետո տպագիրն ունի ենթավերնագիր՝ «Ձինչ է ենթակայ քերականութեան», իսկ ՄՄ 3391-ը՝ «մեկնութիւն», որի տակ թարգմանիչ-հեղինակը բացահայտում է իր բերած (կամ թարգմանած) սահմանումը այսպէս՝ «Ասի արուեստ գործիական յիւրմէ սեռէ, որով համակարգի ընդ բնաբանականին, տաղաչափականին և ճարտասանականին և պատմագրականին, ոյք ամենայնքն են արհեստ ոչ գործնականք, այլ տեսականք»: Առաջ անցնելով պետք է ասել, և նախնական դիտարկումն էլ դա է ցույց տալիս, որ Ոսկանի ձեռագիր քերականությունն իրենից ներկայացնում է լատիներենի քերականության մեկնություն, այսպէս ասած՝ «հայացում», ինչպէս ժամանակին 5-րդ և հետագա դարերի հայ քերականները վարվում էին հունատիպ քերականությունը հայացնելիս: Ոսկանի քննական այդ հայացքը տեսանելի է շատ հատվածներում: Օրինակ՝ քերականական սեռի մասին խոսելիս հեղինակը ձեռագրում գրում է. «Անուանց բաժանումն սեռ է: Անուանց ոմն **արական**, ոմն **իգական**, ոմն **չեզոքական**, ոմն **հասարակ**, ոմն **շարախառն**, ոմն **անստոյգ**» (ՄՄ, 3391, էջ 23բ): Իսկ տպագիր օրինակում ձևակերպումը ստացել է հետևյալ տեսքը. «Երեք են սեռք անուանց, այսինքն՝ **արական, իգական, չեզոքական**»: Նկատելի է, որ ձեռագրից տպագրին անցնելիս նախնական սահմանումը խմբագրվել է, դուրս են թողնվել **հասարակ, շարախառն, անստոյգ** տարատեսակները, իսկ **չեզոք** սեռը համարվել է հայերենին ոչ հատուկ, ինչպէս որ կա իրականում, ընդ որում՝ չեզոք սեռը սահմանում է՝ «որ ոչ զարուս և ոչ զէզս նշանակէ», և դրան անմիջապէս հավելում է՝ «**այս խտրութիւն ի մեզ ոչ գոյ**»: Նույն քննական մոտեցումն է նաև հայցական

²⁶ **Ոսկան Երևանցի**, Քերականութիւն, տպագրիչ Ոսկան Երևանցի, տպարան Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի, Ամստերդամ, 1666, էջ 112:

անկ-ի (=հոլովի) մասին խոսելիս. ՄՄ 3391 էջ 29բ-ում գրում է. «Ասի հայ-ցական ի հայցելոյ, քանզի զինչ հայցենք, այսպէս կերպարանենք»: Յետևում է շարունակությունը՝ **«Բայց առ մեզ ոչ է այլ իմն անկ ներթուում եզականում**, իսկ զյօզնականն սէ-ով թարց նախդրի զա-ի ի բազում տեղիս գտանենք, քանզի կրող պատճառն միշտ ի նմանէ դնի»: Այստեղ կրկին ակնառու երևում է, թե ինչպէս թարգմանական սահմանումից հետո Ոսկանը ձեռագիր է ներմուծել իր մոտեցումը՝ այն մասնավորեցնելով հայերենի իրական տվյալների վրա:

Բոլոր դեպքերում Ոսկանի մոտեցումները ոչ թե տարրալուծված են թարգմանական քերականության շարադրանքին, այլ զատված են՝ «մեկնութիւն», «գիտելի է», «զայս գիտելի է», «զգուշացումն», «զեկուցանելի», «առնշանակութիւն», «կանոնադրութիւն» ենթավերնագրերի տակ: Օրինակ՝ **«զայս և գիտելի է**, զի յոլովք անկք միապէս վերջանան՝ և սեռականն և տրականն, բաց ի դերանուանց» (ՄՄ 3391, էջ 31բ): Ձեռագրի 111-րդ էջում սահմանում է «ժամանակական շաղկապ», բայց դրան հետևում է «մեկնութիւն»-ը. «թէպէտ ժամանակական շաղկապ են առբայք (=մակբայ), որքն որակացուցանեն զիրակութիւնս ժամանակաբար», այսինքն սահմանման մեջ հիշատակված ժամանակի շաղկապները, ըստ Ոսկանի, ուրիշ բան չեն, քան ժամանակի մակբայներ: Իսկ քերականության տպագիր տարբերակում նման մեկնաբանական հատվածներ չկան: Այն խիստ գործնական ձեռնարկ կամ անգամ ուղեցույց է քերականությունն ուսուցանելու համար:

«Բայց **զայս ևս գիտելի է**, զի արդեանս յաւելել ոմանք հոլովս յոքունս նախադրութեանց սակս, **որք են կարի խոսելիք**» (ՄՄ 3391, էջ 32ա): Վերջին այս դեպքում Ոսկանը ավելի քան հստակ ու խիստ է արտահայտվում լատինաբանների այն մոտեցման դեմ, որոնք հոլովներ էին առանձնացնում նաև նախադրությունների կիրառություններից: Այդպիսով Ոսկան երևանցին դառնում է ոչ թե լատինաբան քերականության կրկնողը, այլ՝ ուղղադատ և քննախույզ մեկնաբանողը:

Շարունակենք հետևել ձեռագրի մեկնողական որոշ հատվածներին: «Գիր է յօդաւոր ծայնի **մասն տառի** (տպագիրը ընդգծված բառերը չունի), կամ ըստ լատինացւոց գիր է տարր առաջին, վասն որոյ **նուաստական** (տպ. նուաստագոյն) մասի բանի», ապա այս սահմանումին ձեռագրում հետևում է իր միջամտությունը. **«Մեկնութիւն**. Ասի գիր ի գրելոյ իբրու քերեն, զի քերի ներ բերանում ի ձեռն գործեաց ձայնաւորաց, ներ գրման ի ձեռն ձեռնաւորաց, և գրամատիկա յունարէն ասի իբրու գրումն, զի յիւրոց տարերց ունի զստուգաբանութիւն» (ՄՄ, 3391, էջ 7ա-7բ): Գրի այս սահմանումը մեծ չափով համընկնում է քերականության միջնադարի հայ մեկնիչների, ինչպէս օրինակ՝ Ստեփանոս Սյունեցու մտքերին, որի «Յաղագս տառից» բաժնում կարդում ենք. «Գիր ասի, վասն զի քերելով իմն գաղափարի, այսինքն արիմակի, ուստի յայտ է, թէ ստուգաբանեալ զգրեալս լինի քերեալ»²⁷: Այս և մի քանի այլ համեմատություններ աներկբա ցույց են տալիս, որ որքան էլ Ոսկանը լատինական միջավայրում ստեղծագործած

²⁷ **Ն. Ադոնց**, Դիոնիսիոս Թրակացին և նրա հայ մեկնիչները, Պետրոգրադ, 1915, էջ 232 (ռուս.):

լինի, որքան էլ իր քերականությունը հիմնական կառուցվածքով թարգմանած լինի լատիներենից, և գիրքն էլ տպագրած այդ միջավայրում, միևնույնն է՝ արմատներով հակված է հայ քերականագիտական մտքին և շատ առումներով հենվել է այդ հարուստ ավանդույթների վրա:

* * *

Առանձին քննության թեմա է Ոսկանի՝ հայերենից լատիներենի՝ կատարած թարգմանությունների հարցը: Այստեղ էլ Ոսկանը որոշակի արդյունքներ ունի: Նա նախ՝ լատիներեն թարգմանել է Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը: Այն իր ժամանակ տպագրվելու բախտին չի արժանացել, և Ոսկանի կատարած այս թարգմանության ձեռագիրը պահվում է Փարիզի ազգային մատենադարանում, սակայն և ապացուցում է մեր գիտնականի թե՛ լեզվական ու թարգմանական հմտության, թե՛ այդ հմտություններն ի սպաս հայ մշակույթի ծառայեցնելու նրա պատրաստակամության մասին:

Ժամանակին Ն. Ակինյանը կարծիք է հայտնել, թե այս թարգմանությունը կատարվել է Կորյունի հարազատ որևէ բնագրից²⁸: Մինչդեռ Պ. Անանյանը պարզել է²⁹, որ Ոսկանը թարգմանության համար գործածել է «Ճառընտիրում» առկա Կորյունի հատվածները («համառոտ Կորյուն»), ընդ որում գործածել է Փարիզի ազգային մատենադարանում պահվող այն ձեռագիրը, որը Ղևոնդ Ալիշանը հետագայում որպես բնագիր է վերցրել «Սովերք հայկական» տպագրելիս³⁰:

Հայտնի է, որ 1669 թվականին Ամստերդամից Ոսկանը տեղափոխվել է Փարիզ, քանի որ նպատակ ուներ իր տպարանը հաստատել այնտեղ կամ Ֆրանսիայի որևէ այլ քաղաքում: Չնայած 1670-ին արդեն Ֆրանսիայից նա անցնում է Լիվոռնո, սակայն Փարիզում գտնված այդ մեկ տարվա ընթացքում հասցրել էր ձեռնարկել և թարգմանել Կորյունի երկի համառոտ տարբերակը: Պ. Անանյանը համոզված գրում է, որ «անշուշտ այդ տարուան ընթացքին է, որ Ոսկան ծանօթացաւ Լաքրուա կոչուած ֆրանսացի ուսումնասէրի մը, որ հաւանաբար իրեն առաջարկած էր Կորիւնի երկը լատիներէնի թարգմանել»³¹: Թարգմանության որակի մասին կարծիք գրելով՝ այն որակում է «անսայթաք և կանոնաւոր»: Կորյունի՝ ոսկանյան այս լատիներեն թարգմանությունը տպագրվել է «Բազմավէպում» 1966 թվականին:

Ոսկանը ունեցել է նաև հայ եկեղեցու մասին լատիներեն համառոտ մեկ աշխատություն, որը մնացել է անտիպ: Նրանում ցույց է տվել հայ եկեղեցու նվիրապետական կազմը՝ թեմերով և նրանց ենթակա տարածքներով: Դրա նպատակն, անշուշտ, եվրոպացիներին հայ եկեղեցուն ծանոթացնելն է եղել:

Ոսկան Երևանցու թարգմանչական գործունեության մասին տվյալներ, հատկապես ձեռագիր մատյաններից, էլի կարելի է քաղել: Սակայն

²⁸ Տե՛ս Կորիւն, Վարք Մաշտոցի, «Հանդես ամսօրեայ», 1949, էջ 197:

²⁹ Տե՛ս հ. Պ. Անանեան, Ոսկան վարդապետի լատիներեն թարգմանութիւնը Կորիւնի «Վարք Ս.Մեսրոպայ» համառոտ պատմութե, «Բազմավէպ», 1966, էջ 273-274:

³⁰ Տե՛ս «Սովերք հայկական», հ. ԺԱ, Վենետիկ, 1854, էջ 1-37:

³¹ Հ. Պ. Անանեան, նշվ. աշխ., էջ 274:

Արա օգտաշատ գործունեության այս համառոտ ակնարկն էլ, կարծում ենք, կարող է մի լրացուցիչ անգամ ցույց տալ, որ նա եղել է իր ժամանակի, իրոք, բարձր հոգևոր ու մտավորական գործիչ: Ոսկան Երևանցու թողած գրադարձարկական, թարգմանական, քերականական-մեկնողական ժառանգությունը նրան դարձնում են մեր մշակույթի ամենաարդյունավետ ու նվիրական դեմքերից մեկը:

НОРАЙР ПОГОСЯН – *Попытка сравнительного анализа рукописных и печатных переводных сочинений Воскана Ереванци.* – Книгоиздательская деятельность Воскана оставила в тени прочие сферы его наследия. Так, недостаточно изучена его переводческая работа, основные направления и итоги которой освещены в статье. Переводы Воскана во многом увязаны с его занятиями в области грамматики, поэтому затрагиваются также некоторые его грамматические начинания. В разные годы и по разным поводам Воскан перевёл с латыни различные главы Библии и Иеронима; ему также принадлежат переводы философского характера, в их числе сочинение католического автора Джильберта.

Переводом является и грамматика Фомы Итальянца, которая в статье сопоставляется, с одной стороны, с грамматикой армянского мыслителя того времени Симеона Джугаеци, а с другой – с печатным вариантом грамматики Воскана.

Данные об этих переводных сочинениях почерпнуты из рукописей № 926, 1684, 3391 и др. ереванского Матенадарана им. Месропа Маштоца.

Переводческая деятельность Воскана Ереванци лишней раз доказывает, что он являл собой крупную фигуру интеллектуальной и духовной жизни своей эпохи.

NORAYR POGHOSYAN – *Comparative Analysis of the Manuscripts and Printed Translations of the Works of Voskan Yerevantsi.* – Voskan's printing activity has overshadowed other spheres of his activities. Thus Voskan's translation activity hasn't been sufficiently studied. On the basis of the existing data the author of the article has tried to present the main directions and results of Voskan's translation activity. It is somehow connected with his grammatical activity; hence some grammatical undertakings are also considered.

In different years and on various occasions Voskan translated some chapters from the Bible from Latin into Armenian, such as Siraq, Ezra D, the prefaces, the preface of Heronimos and so on. Some philosophical translations, such as the work of catholic philosopher Gilbertos, also belong to him.

The grammar of Tovma Italatsi is also a translation. In the article that grammar is compared with that of the great thinker of the time Simeon Jughayetsi on the one hand, and the printed version of Voskan's grammar on the other.

The data about the mentioned works are taken from Yerevan Mashtots Matenadaran 926, 1684, 3391 and other manuscripts.

The translation activity of Voskan Yerevantsi proves once again that he was a highly spiritual and intellectual figure of his time.